ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
Հավելված 1

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) հայտարարում է ակուստիկ և ձայնամեկուսացման նյութերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացման,

հրապարակային **բաց** մրցույթ, կից ներկայացվող քանակներին և պահանջներին համապատասխան՝ առանց կոնկրետ ապրանքանիշերի կամ մոդելների հղման:

- **Պահանջվող ապրանքներ և քանակներ:**
  - Հատակածածկ (գորգ / գորգածածկ) – համապատասխան մակերեսի համար.
  - Ակուստիկ կախովի տեքստիլ պանելներ (շերտավարագույրներ/բաֆլեր)՝ տեղադրման կախովի համակարգերով – 120 հատ.
  - Ծակոտկեն փայտյա ակուստիկ պանելներ պատերի և առաստաղի համար – 60 հատ.
  - Մթնեցնող (blackout) վարագույրներ և համապատասխան ուղղորդող երկաթուղիներ (ռելսեր).
- **Ծառայություններ (Տեղադրման աշխատանքներ):**
  - Կախովի ակուստիկ առաստաղային պանելների տեղադրում.
  - Ակուստիկ պատային համակարգերի տեղադրում.
  - Մթնեցնող վարագույրների և ռելսերի տեղադրում.
  - Հատակածածկի (գորգի) տեղադրման աշխատանքներ.

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Բանկի կենտրոնական գրասենյակ, ք. Երևան, Արամի 82-84 հասցեով, Լոգիստիկայի բաժին:

Մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2026թ.-ի սեպտեմբերի 2-ը, ժամը 13:00-ն:

Մրցույթի հայտերի բացման նիստի օրն է 2026թ.-ի սեպտեմբերի 3-ը:

Մրցույթի հայտերը ամփոփվելու են մինչև 2026թ.-ի սեխտեմբերի 9-ը:

Մրցույթի մասնակցության համար նախավճար սահմանված չէ:

Մրցույթի հաղթող ընկերության հետ պայմանագիրը կարող է կնքվել բացառապես <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային հաշիվ ունենալու դեպքում:

Մրցույթի մասնակցության համար մասնակիցները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Բանկի կողմից սահմանված ձևով կազմված և պատշաճ կարգով լրացված Մրցույթի մասնակցության հայտ՝ eFO 81-00-05,

2. մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից կատարվելիք աշխատանքների կամ մատուցվելիք ծառայությունների որակը:

Բանկը, մրցույթի հայտ ներկայացրած մասնակիցների ցանկից, իր ներքին իրավական ակտով սահմանված կարգով ընտրում է այն մասնակցին, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ: Բանկը տասն օրվա ընթացքում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկ է ներկայացնում իր հետ կնքել աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու պայմանագիր:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:

Մրցույթի հայտերը պետք է ներկայացվեն սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով (կնիքի բացակայության դեպքում՝ միայն ստորագրված):

Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից: Ծրարի վրա պետք է նշվեն մրցույթի մասնակցի անունը ազգանունը (անվանումը), հասցեն, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն (առկայության դեպքում) և կատարվեն հետևյալ գրառումները. «Մրցութային հանձնաժողովին», Բանկի հասցեն, «Չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը»:

Անհրաժեշտ նյութերի հետ կապված տեղեկությունների և տարածքին ծանոթանալու համար կարող եք զանգահարել Բանկի Տեխնիկական աջակցման բաժնի պետ՝ Աշոտ Բադալյանին (37494) 700-816 հեռախոսահամարով:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել (37410) 31-88-88 (7077) հեռախոսահամարով, Լոգիստիկայի բաժնի պետ Արտակ Ղազարյանին: